

ՀԱՅԿԱՎԱՆ ՆՇԽԱՐՔ

ԱՐԲԻԱՆՈՍ¹

67. — Միհրդատ, Հոովմայեցիներէն ազատած, հպատակեցուց Պոսփորի ժողովուրդները, և իր որդիներէն մին՝ Մակարը կարգեց անոնց թագաւոր: Յետոյ յարձակեցաւ Աքայեցւոց վրայ՝ որոնք կողքինէն անդին կը բնակին, և ուր ցրտեցան Տրոյիայէն դառնալու միջոց, բայց հոն իւր բանակին երկու մասը կորսնցնելով, ոմանք բաց ճակատամարտներու մէջ, ոմանք սաստկաստուոյց ցուրտի պատճառաւ, ոմանք ալ թշնամեաց դարանակալութեամբ, ետ դարձաւ և նուիրակներ զրկեց ի Հոովմ գաշնադրութեանց արձանագրութեան համար: Արիորարգան ինքն ալ նուիրակներ զրկեց հոն, ինքնաթափ թէ ուրիշներու բռնադատութեամբ, ծերակոյտին տեղեկացնելու համար որ դեռ իրեն վերադարձուած չէր կապաղովկիան և թէ անոր մեծագոյն մասը զեռ Միհրդատ բռնած էր: Սիրդա հրամայեց Միհրդատայ որ կապաղովկիայէն ետ քաշուի, և նա քաշուեցաւ. և յետոյ ուրիշ զեռպանութիւն մ'ալ զրկեց գաշնադրութեանց պայմաններն արձանագրելու համար. բայց որովհետեւ Սիրդա մեռած էր արդէն, ծերակոյտն ալ այն ժամանակ ուրիշ գործերով զբաղած, պատրիկները ծերակոյտի ժողովոյն չներկայացուցին այս զեռպանութիւնը: Միհրդատ համոզեց զգ. Տիգրան՝ իւր փեսայն, որ իւր ինքն իր նախաձեռնութեամբ շարժած՝ արշաւէ ու գրաւէ գկապաղովկիա. սակայն այս խորամանկութիւնն ալ անծանօթ չմնաց Հոովմայեցիներէ: Տիգրան ցանցի մը նման պատեց ամբողջ կապաղովկիան, և երեք-հարիւր հազար հոգի հանելով անտի փոխադրեց զանոնց ի Հայաստան, և տաբաւ բնակեցուց զանոնք բուն հոն՝ ուր

ինքն առաջին անգամ պսակուած էր իւրեւ թագաւոր Հայաստանի, կոչելով այդ տեղն իրեն անուամբ Տիգրանակերտ, որ է ըսել, քաղաք Տիգրանայ:

68. — Մինչդեռ այսպիսի դէպքեր կը պատահէին Ասիոյ մէջ, Սերդորիոս, Սպանիոյ գաւառի Նախագահ կարգուելով, ապրտամբեցուց այս գաւառը և շրջակայը Հոովմայեցւոց դէմ, և հռովմէական ծերակոյտի օրինակին վրայ ուրիշ ծերակոյտ մ'ալ հաւաքեց իւր շուրջն եղող անձանց մէջէն: Սերդորիոսի երկու կուսակիցք, Լուչիոս Մաճիոս և Լուչիոս Ֆանիոս, հրապուրեցին զՄիհրդատ Սերդորիոսի հետ դաշնակցելու, ներկայացնելով իրեն մեծամեծ յոյսեր Ասիոյ վրայ և շրջակայ ժողովրդոց վրայ: Եւ Միհրդատ հրապուրուած այսու, զեռպաններ զրկեց առ Սերդորիոս: Սերդորիոս մտցուց այդ զեռպանները իւր ծերակոյտի ժողովոյն մէջ, և հոն մեծագոյն պարծենալով որ իւր պայմառ համարու մինչև ի Պոնտոս հասած էր, և թէ ընդ հուպ Հոովմայեցիներն արեւմուտքէն մինչև յարեւելս պաշարման վիճակի պիտի ենթարկէ, դաշինք կոեց Միհրդատայ հետ այն պայմանաւ՝ որ անոր պիտի տայ Ասիան, Բիթանիան, Պափլագոնիան, կապաղովկիան և զԳաղատիա, և զրկեց իրեն իրեւ հրամանատար զօրաց զՄարկոս Վարիոս, և Լուկիոս Մաճիոս և Լուկիոս Ֆանիոսն ալ իրեւ խորհրդականներ:

Ասոնց պատճառաւ Միհրդատ հրատարակեց իր երրորդ և վերջին պատերազմը Հոովմայեցւոց դէմ, որուն մէջ ի հիմանց տապալեց իւր գահը: Որովհետեւ երբ Սերդորիոս Սպանիոյ մէջ մեռաւ (Բերբենայի դաւաճանութեամբ խնջոյքի միջոց սպաննուելով, և առաջին հարուած տուողն եղաւ Անտոնիոս իր սուրով), Հոովմէն Միհրդատայ դէմ զրկուեցան նախ Լուկուլլոս, Սիրդայի ժամանակ նաւատորմի ի հրամանատարը, և յետոյ Պոմպէոս՝ բանակներով: Պոմպէոսի ձեռքով, բոլոր Միհրդատայ հարստութիւնը (պետութիւնը) և անոր շրջակայ գաւառները, մինչև ի

1. Երբ մասնազոր Բ. դարու, Հայկական պատմութիւնը կը լուսափն իր Ասորականք և Միհրդատականքը: Այս վերջինէն են մեր քաղաքը:

զետն Էփրատ, այս պատերազմի պատճառաւ և ամբողջ միահամուռ՝ ենթարկուեցան Հոռովմայ ժողովրդեան իշխանութեան:

84. — Զոհերը կատարելէ վերջ (Լուկուլլոս) երկու լեգէոններով և հինգ հարիւր ձիաւորներով քալեց Տիգրանայ դէմ, որովհետեւ չէր ուզեր իրեն յանձնել զՄիհրդատ [որ փախտապահան ապականած էր առ Տիգրան], Էփրատ զետն անցնելով այն գաւառներու բարբարոսներէն ոչինչ աւելի կը պահանջէր քան ինչ որ անհրաժեշտ կարեւորն էր. որովհետեւ այս ժողովուրդը զէնքերէ կը խորշէին և չէին ուզեր պատերազմներու տառապանաց ենթարկուիլ, և ոչ ալ Լուկուլլոսի և Տիգրանի մէջ եղած խնդիրներու մէջ խառնուիլ: Այս պատճառաւ ալ չգտնուեցաւ բնաւ մէկ հողի մ'ալ որ իրեթայ Տիգրանայ լուր տայ թէ Լուկուլլոս յառաջ կու գայ. այն պատճառաւ մանաւանդ որ առաջին անձը որ ուզեր էր զայս իմացնել, Տիգրան զայն կախել տուաւ իրրեւ ժողովրդեան խողովիչ: Սակայն երբ վերջապէս տեսաւ որ Լուկուլլոս յերաւի կը յառաջէ, Միհրոբարզանը զրկեց երկու հազար ձիաւորներով ընդ առաջ՝ Լուկուլլոսի յառաջանալու արգիլելու համար: Մանչէտին ալ յանձնեց Տիգրանակերտի պաշտպանութիւնը, այն քաղցին, զոր ինչպէս վերագոյն յիշեցինք, Թազաւորն այդ տեղերը շինել տուած էր ի պատիւ իրեն, և դեռ բոլորովին աւարտած չէր: Հոն գումարած էր պետութեան ամէնէն ազնուագոյն անձինքը, և հրամայած էր հասարակաց գրաւել ամէն հարստութիւն որ հոն չէր փոխադրուեր: Քաղաքը շրջապատած էր յիսուն կանգուն բարձր պարիսպներով որոնց ներքեի մասը ձիերու համար արտոններ կազմուած էին: Արուարձաններու մէջ կը տեսնուէին արքունի սպարանքը, ընդարձակածաւալ բուրաստաններով, որսորդութեան և ձկնորսութեան համար յատկացուած պատնիշափակներով լի, և անոր մօտ՝ ամենագորաւոր զդեակ մը: Տիգրան այս ամէնը յանձնելով Մանչէտի պաշտ-

պանութեան, ինքը գնաց շրջակայ գաւառները քալելու և զինուորներ ժողովելու համար: Սակայն Լուկուլլոս առաջին յարձակմամբ վանեց և հալածեց զՄիհրոբարզան, իսկ Սեքսդիլիոս, Տիգրանակերտի մէջ շրջափակելով զՄանչէտս, նախ և առաջ կողոպտեց բոլոր արքունի սպարանքն՝ որ պարսպներէ դուրս էր, և քաղաքն ու զդեակը խրամատներով շրջապատեց և բարանները մերձեցուց պարիսպներուն, զորս մի առ մի պարանաձիգ կը կործանէր: Այս գործերով զբաղած էր Սեքսդիլիոս:

85. — Տիգրան զրեթէ երկու հարիւր յիսուն հազար հետեակ և յիսուն հազար ձիաւորներ հաւաքելով, ասոնցմէ զրեթէ վեցհազարը զրկեց առաջուց ի Տիգրանակերտ: Ասոնք հոռովմայեցիները մէջտեղէն զէն զէպ զդեակ վանելով և արքունի հարձեքը դարձեալ ազատելով՝ ետ դարձան: Իսկ ինքն Տիգրան միւս բանակով քալեց ընդդէմ Լուկուլլոսի: Այն ատեն Միհրդատ, առաջին անգամ ներկայանալով Տիգրանայ դիմաց [որովհետեւ Տիգրան չէ ուզած տեսնել զինքը երբ փախտապան ապախնեցաւ իրեն], խորհուրդ տուաւ անոր որ հոռովմայեցւոց հետ ճակատ առ ճակատ չպատերազմի. այլ միայն ձիաւորներով շրջակայքը բոլոր ասպատակելով, ամբողջ դաշտերն սպալանէ, որպէս զի եթէ կարենայ զիրենք շրջափակէ և սովի բռնէ. ճիշտ ինչպէս որ կիզիկոնի քով Լուկուլլոս իրեն ըրած էր և ինքն առանց պատերազմելու ամբողջ բանակը կորուսած էր: Սակայն Տիգրան ծիծաղելով անոր ռազմագիտական խորհուրդներուն վրայ, կը յառաջէր բանակախուժ ճակատամարտի քայլով, երբ տեսաւ Հոռովմայեցիներն և իրենց սակաւաթիւ ըլլալն՝ արհամարհեց ըսելով. «Եթէ ասոնք զես պաններ են, չափազանց շատ են. իսկ եթէ մարտիկ թշնամիներ են, չափազանց քիչ է իրենց թիւը»: Լուկուլլոս Տիգրանին ետեւ տեսաւ յարմար բոլոր մը. ուստի ձիաւորները բանակեցուց ճակատը, հրամայելով անոնց որ բռնադատեն զժըշ-

նամին և իրենց վրայ քաշեն զանոնք. և երբ յառաջ քաշեն, ետ նահանջեն մինչև որ բարբարոսները սկսին հալածել զիրենց և կարգերին խանգարուի. իսկ ինքը մի և նոյն ժամանակ բլուրին շուրջը դառնալով՝ ելաւ անոր վրայ՝ առանց թշնամաց անդրադատնալուն։ Արդ երբ տեսաւ որ թշնամիք իրեն յաղթական սկսած էին հալածել և շատ կողմեր իրենց կարգերը խանգարուած էին և անոնց բոլոր կահերը բլրոյն ստորոտը մնացած էին, գոչեց. «Զօրականք, մերն է յաղթանակը»։ և զայս ըսելով արշաւեց նախ և առաջ կահերուն վրայ և անոնց պահպանները հալածեց։ Ասոնք անմիջապէս և խառնափոթ փախչելով գնացին ինկան իրենց հետեակախումբին վրայ, հետեակներն ալ յետոյ զարնուեցան ձիաւորներուն։ Ուստի շուտով ամէն ինչ փախուստի վերածուեցաւ։ Որովհետեւ թշնամիները, որոնք ցանուցիր եղած էին հալածելու համար, և զրէթէ հռովմայեցի ձիաւորաց ետևը հասած էին, յանկարծ ասոնց յետս դարձան և սպաննեցին զիրենք։ Միւսներն ալ կը զարնուէին կահերու պահպանաց, քանի որ խառնաշփոթ էին։ Բազմութեան պատճառաւ մին միւսին վրայ կուտաւ կուռելով, և ոչ ալ կարենալով իմանալ թէ որ կողմէն էր պարտութեան սկզբնաւորութիւնը, ամենամեծ ջարդ մը կրեցին։ Հռովմայեցիներէն ոչ որ կը համարձակէր կենալ ու կողոպտել պարտեալները, որովհետեւ Լուկուլլոս ամենախիստ պատիժնեւրու սաստիւ արգիլած էր։ Այսպէս հռովմայեցիք թողով ճամբու վրայ ապարանջաններ ու քառամանեակներ, շարունակեցին կոտորածը մինչև զիշեր զրբթէ հարիւր քսան ասպարեզ տարածութեամբ։ Երբ զիշեր եղաւ, դարձան յետս և ժողովեցին աւարն ու կողոպուտ, որովհետեւ Լուկուլլոս այդպէս թոյլ տուաւ։

86. — Մանչէս երբ Տիգրանակերտէն իմացաւ այս պարտութիւնը, կասկածելով իրեն յունական վարձուոր զինուորներուն վրայ, զանոնք ամէն ալ զինաթափ ըրաւ. և ասոնք կասկածելով

որ մի գուցէ զիրենք կալանաւորէ, կ'երթային և խումբ խումբ կը կենային գաւազաններով զինուած։ Այն ատեն Մանչէս իրեն զինեալ բարբարոսներով յարձակեցաւ ասոնց վրայ։ սակայն ասոնք, իրենց զգեստները փաթեթ ու կոյտ մ'ընելով և վահանի նման իրենց ձախ բազկաց վրայ բռնելով, յանդգնարար յառաջ խոյացան ընդդէմ յարձակողաց, և մինչ կը մեռնէին անոնցմէ, մի առ մի կ'առնուին անոնց զէնքերը։ Երբ այսպէս բաւական զէնք ունեցան որքան կարելի էր իրենց, զրաւեցին պարսպի զանազան բաժիններ՝ աշտարակէ մինչև ի միւս աշտարակ, կոչեցին դուռէն հռովմայեցիները, որոնք քաղաքը պաշարած էին, և Հռովմայեցիք ելան իրենց քով պարիսպն ի վեր և սիրով ընդունուեցան։ Այս կերպով ամենուեցաւ Տիգրանակերտ քաղաքը և ամենաւտիկ եղաւ անոր կողոպուտը. որովհետեւ բոլոր անոր զարդերը զեռ նոր էին և բնակիչներն ամէն ալ մեծահարուստ։

Հ. Յ. ԱՌԳԵՐ

1. Տիգրանակերտի պաշարման համար Դիոն. զսուսիս կ'ըսէ, թէ, սաստիկ դժուարին եղաւ Հռովմայեցեաց, որովհետեւ պահակապաշտը ոչ միայն նետամիջ կ'ըլլային, այլ նաև յատուկ մեքենաներով կ'արձակէին կը հոսէին, և կ'այրէին զամենքը։ Իսկ Պլուտարքոս կը յիշատակէ որ Լուկուլլոս իրեն սեպականեց ըստ արքանի զաննը, իսկ քաղաքը թողուց զօրաց աւարտաւորներուն, որոնք այլ անթիւ նարտութիւններէ զատ զառն հոն միայն ութ հազար տաղանդ կոփածոյ դրամ, թշնամեաց կողոպուտէն ալ իրաքսնչիւր զինուորի բաշխեց ութհարիւր դահկան։

Կը պատմուի, կ'ըսէ Պլուտարքոս, որ Տիգրան իւր պարտութեան միջոց կորսնցուց նախոր հազարէն աւելի հետեակ, և ձիաւորներէն ալ խիստ քիչեր կըքան փախչել։ Իսկ հռովմայեցիներէն մեծան միայն ինչոց հոգի և նախոր մ'ալ վերադարձան։ Անտրոքոս իմաստասէրն ալ կ'ըսէ որ այսպիսի բան մը արեւր զեռ էր տեսած։ Իսկ Ստրաբոն կ'աւանդէ որ Հռովմայեցիք անգամ կ'առնային այլաքան վատ բանակի մը դէմ պատերազմած ըլլալուն վրայ։

